

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՐԻՅԵԱՆ, Ալէքսանդր.—«Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կողկասի Հայք XIX դարում: Մասն Ա. (1800—1832 թթ.): Թիֆլիս, տպարան Մ. Մարտիրոսեանի և ընկ.» 1894 թ.: Մեծ ութածալ. ԺՁ+658 երես, տառ № 12: Գինն է 2 ռ. 50 կոպ., ճանապարհածախսով 3 ռուբլի:

Մեր առջևը դրած փառաւոր հատորը բոլորովին զուրս է հայոց սովորական հրատարակութիւնների շարքից: Սա մի պատական աշխատասիրութիւն է, գործ տասնեակ տարիների քրտնաջան աշխատանքի, գլուխ-գործ ժամանակակից հայ պատմագրութեան թէ նիւթերի առատութիւնով և թէ պատմաձքի սխտէմականանութեան տեսակէտից: Պարոն Երիցեանը, որը առհասարակ նորադուր ժամանակների անցքերին տեղեակ անձի համբաւ ունի—մինչ այժմ չէր տեղծել մի խոշոր գործ, որով նա սերտ կապէր ժամանակիս պատմութեան գրականութեան հետ. իւր ներկազ գործքով, սակայն, նա ոչ միայն գալիս է իւր տեղը որոշելու այդ գրականութեան մէջ, այլ և մի փառաւոր արձան է կանգնեցնում ռուսահայերի պատմական գրականութեանը 19-երորդ դարում:

Ճիշդ է, այսպիսի կարծիք չպտնելու համար զգուշութիւնը մեզ պէտք է թեւադրէր սպասել խոստացած երկրորդ հատորին, բայց այս առաջին հատորով ամբողջ գործքի ընդհանուր բնաւորութիւնը արդէն որոշած կարելի է համարել: Եւ նորանով մեծ գրաւականներ են տրած որ առնւազն պատմութիւնը՝ սկսած 1832-ից մինչ 1857 թւականը, որ ընդգրկում է Յովհաննէս Կարբեցու և Ներսէս Աշտարակեցու կաթողիկոսութիւնները, արժանաւոր շարունակութիւնը կը լինի այս առաջին հատորին, թէև խոստացած երկրորդ հատորը պէտք է պարունակի նաև Մատթէոս, Գեորգ IV և Մակարի կաթողիկոսութիւնները:

Այս առաջին հատորը բովանդակում է Յովսէփի, Դաւթի, Դանիէլի և Եփրեմի կաթողիկոսութիւնները և նոցա ժամանակակից ռուսահայոց

պատմութիւնը, որքանով անցքերը վերաբերում են քաղաքական կեանքին: Ընթերցողները անազան մեծամասնութեան համար մեր դարու հաջոց այդ շրջանի պատմութեան մանրամասնութիւնները գրեթէ կատարելապէս անչափ էին: Ահա ինչու ընթերցողները ընդհանրութեան համար Երիցեանի պատմութիւնը նուէքան մի «լատնութիւն» է որքան լատնութիւն էր Բաֆֆրի «Խամալի Մեքլիքութիւնները»: Գորա պատճառը անշուշտ պատմական գրեթէները մեծ սակաւութիւնն է և պատմական հետազոտութիւններին ներառած ձեռնհաս անձերի գրեթէ բացակայութիւնը:

Պարոն Երիցեանը սկսում է իւր պատմութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսի կաթողիկոս ընտրելուց 1800 թվականին: Այդ ժամանակ էջմուռի մէջ գտնուում էր դեռ ևս պարսից սահմաններում. բայց կարևոր է որ Յովսէփ կաթողիկոսը ընտրելովն է առաջին անգամ սկսում ուստական քաղաքականութեան միջամտութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսների ընտրութեան և առ հասարակ էջմուռի գործերի վերաբերմամբ: Այդ հանգամանքը մէկն է գրքի մէջ շօշափած բաղմամբիւ այլ նշանաւոր կէտերից, և նորա զարգացմանը թող է տալիս լաւ հետեւելու պ. Երեցեանի աշխատութիւնը: Մինչ այդ ժամանակ կաթողիկոսը ընտրութիւնը, որ կատարում էր էջմուռի միաբանութեան, ուստահայոց աւագանիների մասնակցութեամբ և Պոլսի ազգայինների հաւանութեամբ, ենթարկած էր թէ պարսից և թէ տաճկաց պետութիւնների ազդեցու-

թեանը. դորա վրայ ալժամ եկաւ ու աւելացաւ ուստաց քաղաքականութեան ազդեցութիւնը: Շնորհիւ այդ բանի, եթէ մինչ այժմ նորընտիր կաթողիկոսին ճանաչելու համար հարկաւոր էր պարսից հրովարտակ, բայց մասնաւոր թիւրքաց Սուլթանի Ֆերմանը, այժմ արտաքին կողմից տաճկական Ֆերմանը դեռ ևս մնալով իբր գլխաւոր պալման՝ դորա վրայ աւելացաւ ուստաց կապերական հաստատութեան թուղթը: Բայց նկատելու արժանի է, որ այդ կարգը հազիւ տեսց մի տասնեակ տարի, և գործադրեց միայն Յովսէփի և Գանիէլի ընտրութիւնների համար, այնպէս որ Գանիէլի չաջորդ Նիւրեմի կաթողիկոսանալը կատարեց ազգային ընտրութեամբ, բայց միայն ուստաց հաստատութեամբ՝ առանց հետամուտ լինելու Սուլթանի Ֆերման ստանալուն, չնայած որ էջմուռի մէջ դեռ ևս ուստաց հողի վրայ չէր ևս Պոլսեցի հայերին չաջորդեց այնու ամենայնիւ տաճկաց կառավարութիւնից թուլուութիւն ստանալ նոր կաթողիկոսի անունը չիշատակել: Նիւրեմի չաջորդ Յովսէփն էս Կարբեցու կաթողիկոսանալը կատարեց, երբ Արարատեան աշխարհը (Երևանի խանութիւնը) էջմուռի մէջ հանդերձ ուստաց էր պատկանում: Այդտեղ մենք տեսնում ենք որ կաթողիկոսական ընտրութիւնը կատարում է արդէն աւելի անմիջական ազդեցութեան ներքոյ ուստաց տեղական (Աղկասեան) իշխանութեան և, ընտրութեամբ էջմուռի միաբանութեան, որին ներկայ է լինում ուստաց կառավարութեան ներ-

կազացուցիչը. երկու կանդիդատները առաջարկուած են հաշտարահական աւագանիներէ հաւանութեանը և ապա ռուսաց կաշտի հաստատութեանը:

Այդ ժամանականից Տաճկական-Պարսկական կառավարութիւններին միայն հաղորդուած էր կատարած ակտի մասին:

Ռուսաց միջամտութիւնը 1800 թականին արդարացնուած էր ռուսաց տէրութեան կողմից նրանով, որ Ռուսաստանում ևս Հաշտարկալին, կար նաև հալոց մի թեմ (Հաշտարխանինը, որովհետև այդ ժամանակ Բեսարաբլիայի անկախ թեմ դեռ ևս չկար): Ապա այդ հանգամանքը աւելի ծանրակշիռ դառաւ, երբ Վրաստանը միացեց Ռուսաստանին, իսկ Վրաստանում հաստատուած էր հալոց թեմ դեռ վրաց ժամանակ: Գորա վրայ լիտոց աւելացաւ Արարատիան աշխարհի նւաճումը 1827—28 թ., որով արդէն իսպառ վերացաւ պարսից և տաճկական կառավարութիւններէ ազդեցութիւնը և կաթողիկոսական ընտրութեան հաստատելու պահանջը նոցա կողմից:

Ռուսաց կառավարութեան միջամտութեանը կաթողիկոսական ընտրութեան մէջ դարուս սկզբում, անկասկած, մեծապէս նպաստել է այս հանգամանքը որ այդ ժամանակ հաշտարկալիսկոպոսներէ մէջ եղել է Յովսէփ արքեպիսկոպոս իշխան Արղութեանը՝ Ռուսաստանի հալոց թեմի առաջնորդը՝ աչն ժամանակաւ հոգևորականութեան մէջ այդ խոշորագոյն անձնաւորութիւնը, որը կաթողիկոսութեան բնական թեկնածուն էր

Ղուկաս կաթողիկոսի մահանից չետոյ († 1799, դեկտ. 25): Եւ թէ որքան սերտ կապ կար ռուսաց միջամտութեան խնդրի և Յովսէփի անձնաւորութեան մէջ, այդ երևում է նրանից, որ ռուսաց առաջին միջամտութիւնը եղաւ նոյն այդ Յովսէփի օգտին, ընդդէմ Էջմիածնի միարանութեան տրամադրութեան, որը հարկադրուած եղաւ իր առաջին վճիռը չօգուտ (Տաճկահաշտ) Գանիէլի փոխել և սորա հետ միասին նաև Յովսէփին ընտրելի համարել, վերջնական ընտրութիւնը Պոլսեցիներին թողնելով: Եւ այդ բաւական չեղաւ ռուսաց դեսպանի ջանքերով Գանիէլ և նորա կուսակիցները Պոլսում աքսորուեցին և Յովսէփը չաղթանակը տարաւ աճա՛ այդ գնով:

Միջամտութեան ուժգնութիւնը պակաս սաստիկ չէր, բաց և աւելի աղէտալի էր՝ Յովսէփի չաջորդ Գալիթ եպիսկոպոս Ղորղանեանի կաթողիկոսանալու խնդրում, ընդդէմ նոյն Գանիէլի և ընդդէմ Էջմիածնի միարանութեան, ընդդէմ հաշտարկալի կամքի, բացառութեամբ սակայն Թիֆլիսի Գալթեան կուսակիցներին: Եւ միմիայն կաշտար Ալէքսանդր I-ի անձնական արժանիքին պէտք է վերագրել, որ Գալիթ-Գանիէլեան խալտառակութեանը վերջ տրուեց Գանիէլի հաստատութեամբ, թէև գործը դորանով իսկոչն չդադարեց:

Եւ միթէ սա մի պատահական բան էր, որ թէ Յովսէփի և թէ Գալթի խնդրում համազգային տրամագրութեան հակառակ գործողները Թիֆլիսի հաշտարանիներն էին? Անշուշտ դա պատահական չէր. լոյս-

Ներքը դրած վրաց արքունիքի և ռուսաց կառավարութեան պաշտպանութեան վրայ և այդ զօրութիւններով ճնշումն դործ դնելով Երևանի Սարդարի վրայ—Թիֆլիսի առաջաճինքը ցոյց տւին թէ ինչ հասկացողութիւն ունէին ազգային ընտրութեան մասին և թէ ինչպէս էին նոքա իրանց զգացումներով կապւած մնացեալ հալութեան հետ: Եւ եթէ Յովսէփի ղէպըսով կար մի անդիմադրելի հանգամանք—արքեպիսկոպոսի անձնական զերագոսնցութիւնը, Գաւթի ղէպըսով այդ խօսմ լսագառ բացակայում էր:

Գանիէլի վերջնական ընտրութիւնը և տէրութիւնների կողմից ճանաչելը, սակաւն, մի մեծ բարոյական չաղթանակ էր ազդի ընդհանրութեան համար: Գանիէլը ընտրւած էր 1800-ին և չաջողեց. ընտրեց նաև Յովսէփից Վստոյ—կրկին չաջողեց Գաւթի պատճառով. քաշեց սնուր անարգանքներ Գաւթի և Նրեւանի խանի և պարսից Շահի ձեռքից.—բայց ազգի կամքը իւր չաղթանակը տարաւ, և Գանիէլը բարձրացաւ դահը—ստիպւած հաւանութեամբ բոլոր երեք զետութիւնների:

Գանիէլի չաջորդ Նփրեմի կաթողիկոսանալը եղաւ դեռ ևս այն ժամանակ (1809), երբ Էջմիածինը պարսից հողի վրայ դառնելու պատճառով պարսից հաւանութիւնը անհրաժեշտ պալման էր, և երբ դեռ կենդանի էր պարսիկներին մտերիմ գահընկեց Գաւթի, որը նորից կարող էր գլուխ բարձրացնել: Բայց արդէն այնքան զգուշի էր պարսից տիրապետութիւնը, այնքան խախտ-

ւած Էջմիածնի անդորրութիւնը և նոյնքան աւելի գերադասելի էր համարում ռուսաց համակրութիւնը ու համաձայնութիւնը այդ խնդրում, որ դեռ ևս Գանիէլի կենդանութեան օրով, նորա իսկ ցանկութեամբ Էջմիածնից խնդիրը գնաց Պետերբուրգ, ռուսաց կայսրին՝ Ռուսաստանի թեմի առաջնորդ (Գաւթի թշնամի) Նփրեմի եպիսկոպոսին կաթողիկոս հաստատելու համար, որ և կատարեց արդէն Գանիէլի շուտահաս մահուանից Վստոյ: Եւ այդ կատարեց առանց նախօրք գիտութեան Տաճկահայերի և առանց բանակցելու անգամ բարձրագոյն Գաւթի հետ: Այդպիսի փափակ դրութեան մէջ գտնւելով, Պոսի պատրիարքը և ամիրաները առանց ֆերմանի էլ կարողացան իրաւունք ձեռք բերել որ Նփրեմ կաթողիկոսի անունը վիշտի Տաճկահայոց եկեղեցիներում: Բայց ինչ վերաբերում է միջազգային իրաւունքին՝ Նփրեմի կաթողիկոս հաստատելը մի կարևոր պատմական բողոք է համարել:

Պրն. Նրիցեանի գիրքը, որ իւր սխտեմական պատմածքով առատ նիւթեր է տալիս կաթողիկոսութեան պատմութեան աչա և աչն մոմէտները իրանց պատմական շարադարութեամբ ըմբռնելու համար, իւր Էջերի ամենամեծ մասը նւիրում է Նփրեմի կաթողիկոսութեան ժամանակին: Եւ բնական է այդ. Յովսէփ, Գաւթ և Գանիէլ կաթողիկոսութիւն են անում միայն իննը—տասը տարի (1800—1809), միջդեռ Նփրեմի կաթողիկոսութիւնը տարածւում է եռապատի կաւելի երկար ժամանակամիջոցի վրայ 1809-ն մինչ 1830 թւականը: Բայց

միայն ժամանակամիջոցը չէ կարևորը, այլ և հալոց պատմական կեանքի շատ աւելի մեծ ուժգնութիւնը Եփրեմի ժամանակ և պատմական գրագրութիւնները անհամեմատ աւելի մեծ առատութիւնը:

Գրքի 658 էջերից 612-սը նւերած է այդ ժամանակամիջոցին: Եւ պատմութեան ոգին կազմում է ոչ թէ Եփրեմ կաթողիկոսը, այլ այդ ժամանակաւ հալոց հոգևորականութեան և կարելի է ասել՝ նաև բոլոր Ռուսահալոց իշխող ոգին՝ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին, (եւ տովկալ կաթողիկոս), այդ զօրեղ անձնաւորութիւնը՝ որի գործունէութեան մասին ի մօտոյ ծանօթանալուն հնարաւորութիւն է տալիս պ. Նրիցեանի ներկաւ աշխատութիւնը: Այդ պատմութիւնը լիքն է նաև գրամատիկական լուսնակներով. Ներսէսի կռիւնք թիֆլիսի աւագաների հետ, իբրև վրաստանի հալոց թեմական առաջնորդ, Ներսէսի կատարած դերը Ռուսի և պարսկական պատերազմի մէջ 1826 — 28-ին, պարսկահալոց գաղթականութեան խնդրում, Ներսէսի և Կովկասեան տաղանդաւոր և զօրեղ կուսակալ Պասկելիչի ընդհարումները, այդ ամենի գեղեցիկ պատկերացումը դարձնում են պ. Նրիցեանի գիրքը նաև լոկ ընթերցանութեան համար մի վերին աստիճանի հետաքրքրական պատմութիւն:

Պր. Նրիցեանը զուրս է բերում Ներսէս Աշտարակեցուն իբր մի հոգևորականի, զօրեղ և անընկճելի կամբողջ խելօք, հեռատես, և իբր մի մարդու, որի անձի մէջ կենդրոնանում էր իւր ժամանակաւ ազ-

գային և եկեղեցական քաղաքականութիւնը, բայց և շիտակութեամբ չարած ռուսաց իշխանութեանը: Ներսէսի դէմ գործողները հալերից, աշխարհական թէ հոգևորական, մեկականում են պ. Նրիցեանի գրածքում որպէս ժամանակաւ չարիքներ կամ որպէս ստոր արարածներ: Այսպէս է մեր տպաւորութիւնը պ. Նրիցեանի գրածքից:

Իրողութիւն է նաև, որ Ներսէսը լինելով վրաստանի հալոց թեմական առաջնորդ, իրապէս ոչ միայն այդ թեմի գործերն էր կառավարում, այլ և իշխում էր ս. Էջմիածնում, վալեյելով Եփրեմ կաթողիկոսի անսահման հաւատը, անգամ սորա երկրադածութիւնը, որի աչքում Ներսէսը մի տեսակ «ախախնամութեան մարդ էր» (l'homme providenciel): Նոյն իսկ Բեսարաբիա տեղափոխելով Ներսէսը շարունակեց իւր այդ դերը կատարել, տարածելով իւր հեղինակութիւնը նաև վրաստանի թեմի և Էջմիածնի վրայ: Այդ իշխանութիւնը այնքան իրական էր, որ Էջմիածնի սինոդական կառավարութիւնը Ներսէսին, Բեսարաբիա, «ամենախոնարհ չալտարարութիւններ» էր ուղարկում, տեղեկացնելով նորան պատահած անցքերի մասին, սպասելով նորա կարգադրութիւններին և մեծարելով նորան իբր «Գերամբարձ մեծանձնութեան Աստածարեալ տեսուն Ներսիսի՝ բարձր սրբադան արքեպիսկոպոսի և ասպետի, ծաղրագոյն կառավարչի հոգևորական գործոց» (գրութիւն 1829 թ. չունիսի 30):

Եւ իբօք, Եփրեմի օրօք՝ Ներսէս

արքեպիսկոպոս Աշտարակեցին հայոց հոգևորական գործերի ծախագոյն կառավարչի դեր էր կատարում, թէ թիֆլիս և թէ վտոյ Բեսարաբիա եղած ժամանակ, չնայած Պասկելիչի անողոք թշնամութիւններին և հալածանքներին, ինչ էր այդ կաթողիկոսական իրաւունքների բռնադատումն (ուզուրպացիա) արդեօք? Պր. Ներցեանի բերած նութեբը բաւարար պատասխան են տալիս այդ հարցին:

Ներսէսը իւր այդ իրական իշխանութիւնը բանեցնում էր ոչ միայն գիտութեամբ Նփրեմ կաթողիկոսի, այլ և սա ինքն էր որ ամեն կերպ նպաստում էր Ներսէսի օգտին ճանաչել այդպիսի հեղինակութիւն: Դեռ ևս 1822 թւականին Նփրեմը հրաժարական տեց կաթողիկոսութիւնից, ապաւինելով իրան Ներսէսին, որը ոչ միայն չուզեց օգտուել ինքը կաթողիկոսանալու, որպէս այդ Նփրեմի ջերմ փափագն էր, այլ Ներսէսն էր որ աշխատեց և պահպանեց Նփրեմի օգտին սորա կոչումը և իշխանութիւնը, երբ իբր թէ հրաժարած Նփրեմը Հաղպատի վանքումն էր առանձնացած: Ապա էջ 599 բերած է Ներսէսին գրած կաթողիկոսի մի գրութիւնը 1828 թւականից, որից պարզ երևում է թէ որքան անկեղծութեամբ նւիրւած էր Նփրեմը Ներսէսին: Այդ գրութեան մէջ ևս Նփրեմը խնդրում է Ներսէսին «արտաւօք հանդերձ» փութալ գալ ժամ լառաջ ի Հայրապետական Աթոռս՝ մինչև մեռեալ իցեմ. զի անձամբ իմով օծեալ զմիայն արժանաւորդ այսմ Աթոռոյ՝

Հայրապետ և կաթողիկոս ընդհանուր ազգիս...»:

Պասկելիչի քաղաքականութիւնը, ճիշդ է, այլ վախճանի տարաւ, և Նփրեմի երկրորդ և վերջին հրաժարականից վտոյ գահ բարձրացողը եղաւ մի մարմնացած սև նախանձ՝ կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը, Պասկելիչի protégé ն. բայց վերուիշխալ ֆակտերը բաւականաչափ պարզում են այն ինդիքը թէ ինչու էր Աշտարակեցին («ձախագոյն կառավարիչ») հայոց հոգևորական գործերի Նփրեմի օրօք և թէ ինչ բնատրուածութիւն ունէր այդ հեղինակութիւնը: Եւ, պէտք է ասած, ոչ միայն պ. Ներցեանի առաջ բերած իրողութիւններն են այդ եզրակացութեանը բերում, այլ և ինքն պ. Ներցեանը այդպէս է մտածում: Նորա այս առաջին հատորը մի տեսակ ապօթէոզ է Ներսէս Աշտարակեցուն, թէ և ոչ մի տեղ նա կողմնապահութեան մէջ իրան չի մատնում, թողնելով որ գոկումէստները իրանք փաստաբանութիւն կատարեն:

Նրկրորդ հատորը սկսելու է Յովհաննէս կարբեցու կաթողիկոսութիւնից. բայց արդէն այս առաջին հատորում պատմածը այդ անձի մասին գուշակել է տալիս թէ ինչ դատաստան է սպասում Նփրեմի չաջորդին:

Անշուշտ մենք այսքանով զեռ ևս չսպառեցինք այն բոլոր կէտերը, որոնք շօշափւած են պ. Ներցեանի գրքում: Եւ մեր նպատակն էլ չէր այդ: Ընթեցողին է թողած այդպիսի կէտեր որոնելը, որովհետև ներկալ գրքում խնդիրներ չեն շօշափ-

ած, ալ միայն սիստէմական պատմութիւն է արած ժամանակի կեանքի Բալց խնդիրներ ուսումնասիրելու համար ալ զ պատմութիւնը թէ նրութեք է տալիս և թէ ուղեցուց է ծառայում, Պատմած առարկաների թում լինենք ռուս-պարսկական և ռուս տաճկական պատերազմները 1826—27—28 թթ., Պարսկահայերի և Տաճկահայերի զաղթը զէպի ներ

կալ Երևանի նահանգը, Ալեքսանդրապոլ, Նոր-Բալաղէղ, Ալսալցիսա և այլն,

Յանկանում ենք որ ալ գործի շարունակութիւնը իրան երկար սպասել չտալ: Ուզում ենք հաւատալ հեղինակին որ երկրորդ հատորը իրօք տպում է:

Ա. Ա.

[Faint bleed-through text from the reverse side of the page, mostly illegible.]